ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

«ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/2» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 03.05.2017թ. ժամը 11^{00}-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Պետրոսյանը, Վ. Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Ե.Հովհաննիսյանը, և քարտուղար Մ.Մուրադյանը:

Գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը բացակայում է:

Նիստը նախագահեց Վ. Պետրոսյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած և չներկայացրած մասնակիցների անվանումները և գտնվելու վայրի հասցեները

«ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/2» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերը բացվել են ARMEPS գնումների էլեկտրոնային համակարգի միջոցով հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին.

Ա) հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

1. **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ (ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 110)**
2. **«ՍԱՔԻ» ՍՊԸ (ՀՀ. ք. Գորիս, Անկախության 12/31)**
3. **«ՅԱՍՈՆ» ՍՊԸ (ք. Երևան, Վրացական 16)**
4. **«ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ (ք. Երևան, Հ.Հակոբյան 3)**
5. **Ա/Ձ Իրինա Մելքոնյան (ք. Երևան, Շերամի 47-28)**

Բ) հայտ չեն ներկայացրել համակարգում 03.05.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած մասնակիցները:

2. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1. Բոլոր մասնակիցների կողմից էլեկտրոնային ձևով ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

3.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

3.1 **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ, «ՅԱՍՈՆ» ՍՊԸ և «ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ** մասնակիցների կողմից ներկայացված հայտերը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված են հրավերի պահանջներին համապատասխան:

3.2 **«ՍԱՔԻ» ՍՊԸ-ի** և **Ա/Ձ Իրինա Մելքոնյանի** կողմից ներկայացված հայտերում /հայտերում առկա փաստաթղթերում/ կան թերություններ, մասնավորապես՝ մասնակիցների կողմից ներկայացված հայտի **Հավելված 3.1-ում՝** մասնագիտական փորձառության մասին

հայտարարությունում հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագրի(երի) **անվանումը և պայմանագրերի ընդհանուր արժեքը բացակայում է:**

3.3 **Ա/Ձ Իրինա Մելքոնյանի** կողմից ներկայացված հայտի բոլոր փաստաթղթերը ստորագրված են անհասկանալի էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

Հանձնաժողովը որոշեց՝

1. **Ա/Ձ Իրինա Մելքոնյանի** կողմից ներկայացված հայտի էլեկտրոնային փաստաթղթերը ներկայացնել «ԷԿԵՆԳ» ՓԲԸ՝ պարզելու էլեկտրոնային թվային ստորագրության ճշտությունը:
2. ՀՀ կառավարության 10.02.2011 թվականի 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն՝ գնահատման գործընթացը կասեցնել մեկ աշխատանքային օրով: Հաջորդ նիստը հրավիրել **04.05.2017թ. ժամը 16:00**-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Նիստը նախագահեց՝ _____ Վ. Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ

_____ Վ. Մկրտչյան

_____ Մ.Անտոնյան

_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

«ՇՀԱՊՁԲ-15/3-ՀՀՔԿԴ-17/2» ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով շրջանակային համաձայնագրերով գնումներ կատարելու ընթացակարգով ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

Գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 04.05.2017թ. ժամը 16^{00}-ին, ՀՀ քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի անդամներ Վ. Պետրոսյանը, Վ. Մկրտչյանը, Մ.Անտոնյանը, Ե.Հովհաննիսյանը, և քարտուղար Մ.Մուրադյանը:

Գնահատող հանձնաժողովի նախագահ Գ.Արշակյանը բացակայում է:

Նիստը նախագահեց Վ. Պետրոսյանը:

1. Անհամապատասխանությունը շտկելու և էլեկտրոնային թվային ստորագրության ճշտության վերաբերյալ

1.1 **«ՍԱՔԻ» ՍՊԸ-ն** և **Ա/Ձ Իրինա Մելքոնյանն** սահմանված ժամկետում ներկայացրել են շտկված փաստաթղթերը, որոնք համապատասխանում են հրավերի պահանջներին:

1.2 Համաձայն «ԷԿԵՆԳ» ՓԲԸ-ի պատասխանի՝ **Ա/Ձ Իրինա Մելքոնյանի** կողմից ներկայացված էլեկտրոնային փաստաթուղթը չի կրում էլեկտրոնային ստորագրության ճշգրիտ տվյալներ: Էլ. ստորագրության ներքին էլեկտրոնային դարանում չի հաջողվել գտնել Իրինա Մելքոնյանի տվյալները և չեն հայտնաբերվել ստորագրող անձի ՀՀ հավաստագրման կենտրոնի կողմից թողարկված հավաստագրերը:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և նախահաշվային գինը

Հ/Հ	Անվանում	Քանակ	Նախահաշվային գին	Մասնակիցների անվանումները և ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի /ՀՀ դրամ/				
				«ՍՄԱՐԹ ԼԱՅՆ» ՍՊԸ	«ՍԱՔԻ» ՍՊԸ	«ՅԱՍՈՆ» ՍՊԸ	«ԼԵԳԱԼ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ	Ա/Ձ Իրինա Մելքոնյան*
1	**նամակի ծրար՝ Ա6**	30000	270000	200000	204000			
2	**հատուկ Ա5 ծրար**	400	16800		10000			
3	**պահատուփեր**	243	692550			498000	636660	727785

*Հանդիսանում է ԱԱՀ չվճարող

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

Հանձնաժողովը որոշեց.

1.1 Ընթացակարգի **առաջին տեղ զբաղեցրած** մասնակիցներ ճանաչել՝

1 չափաբաժնի համար **«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ** -ին,
2 չափաբաժնի համար **«ՍԱՔԻ» ՍՊԸ** –ին,
3 չափաբաժնի համար **«ՅԱՍՈՆ» ՍՊԸ** –ին:

1.2 Ընթացակարգի **երկրորդ տեղ զբաղեցրած** մասնակիցներ ճանաչել՝

1 չափաբաժնի համար **«ՍԱՔԻ» ՍՊԸ** –ին:
3-րդ չափաբաժնի համար մնացած մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են նախահաշվային գինը:

2. Մերժել **Ա/Ձ Իրինա Մելքոնյանի կողմից ներկայացված հայտը՝ հիմք ընդունելով** ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 44-րդ կետի 4-րդ ենթակետը և 45-րդ կետը:

3. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի(այսուհետ՝ Կարգի) 47-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի համաձայն փաստաթղթերի ստացումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, 15.00-ին, ՀՀ Քննչական կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5 հասցեում:

Հանձնաժողովի քարտուղարին՝

1. Համաձայն Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետերի՝ առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ հարցում ներկայացնել ՀՀ ԿԱ ՊԵԿ,
2. Համաձայն Կարգի 47-րդ կետի 2-րդ ենթակետերի՝ ծանուցել առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Մասնակցում էին

Նիստը նախագահեց՝ _____ Վ. Պետրոսյան

Հանձնաժողովի անդամներ

_____ Վ. Մկրտչյան
_____ Մ.Անտոնյան
_____ Ե.Հովհաննիսյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ.Մուրադյան